№ 136 Յուլիսի 25 (Օգոստոսի 6) 1881 Յուլիսի 25 (Օգոստոսի 6) № 136

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## „ՄՇԱԿ"

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ

ԿԷՍ ՏԱՐՈՎ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թւի, մինչև յունվարի 1-ը 1882 թւի։

Բաժանորդութեան գինը 6 բուբլ է։ Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետեւեալ հասցէով. *Тифлисъ, редакція „Мшакъ"*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ով է մեղաւոր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Անգլիա։ Գերմանիա։ Արտաքին լուրեր։—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Արդանուշից։

### ՈՎ Է ՄԵՂԱՒՈՐ

—

„Մշակի" № 134 մէջ տպվեցաւ մի փոքրիկ նամակ Շուշուց։ Այդ նամակի մէջ նկարագրվում է ոչ թէ միայն Շուշու, կամ Ղարաբաղի հայի յատկութիւնը, բայց մեր կարծիքով առհասարակ հայի բնաւորութիւնը։

Հայը ժլատ է իր ազգային դպրոցի, իր ազգային հիմնարկութիւնների վերաբերութեամբ, բայց առատաձեռն է այնտեղ, որտեղ սպասում է օգուտ, նիւթական շահ, կամ փառք և պատիւներ։ Հայերին հրաւիրում են օգնել իրանց դպրոցին, որտեղ նրանց զաւակները ուսում են ստանում մայրենի լեզուով,—նրանք ոչինչ օգնութիւն չեն տալիս։ Նոյն հայերին, մի քանի օրից յետոյ, կամ հէնց նոյն օրը հրաւիրում է ռէալական դպրոցի կամ օրիորդական քաղաքային դպրոցի վարչութիւնը, առաջարկելով նիւթական նպաստ հասցնել դպրոցին,—և նոյն անձինք, որոնք ոչինչ չը տուեցին իրանց դպրոցին, մեծ առատաձեռնութեամբ հազարներ են նուիրում յոգուտ ռէալական դպրոցի կամ քաղաքային իգական ուսումնարանի։

Եթէ հայը այդ անում է հասկանալով, առհասարակ, ուսման օգուտը, ի՞նչի նա նոյնը չէ անում և իր հոգևորազգային դպրոցի վերաբերութեամբ։ Այդտեղ, ուրեմն, մի ուրիշ պատճառ պէտք է լինի, բացի ուսման յարգը ճանաչելուց։

Գուցէ մեր թղթակիցը ուղիղ է ասում որ մի տեղ անչափ ժլատ և անտարբեր լինելով, իսկ միւս տեղ առատաձեռն, հայը աչքի առաջ ունի վարձատրութիւն, պատուաւոր տիտղոս, համազգեստ, աստիճան, շքանշան։ Եթէ այդ լինէր հայի վարմունքի շարժառիթը, դա ճշմարիտ շատ դատապարտելի բան կը լինէր, որովհետև զաւակներին ուսում տալու ձգտումը չը պէտք է թելադրվի ծնողների անձնական փառքի զգացմունքով։

Բայց մեր կարծիքով այստեղ կայ և մի ուրիշ շարժառիթ։

Ամեն պատրաստականութիւն ցոյց տալով օգնել նիւթապէս քաղաքային կամ պետական դպրոցին և անտարբեր, անհոգ և ժլատ լինելով դէպի իր ազգային դպրոցները, հայը ցոյց է տալիս իր գործնական ոգին, ցոյց է տալիս որ դեռ չէ հասկանում որ ուսումը հարկաւոր է նոյն իսկ ուսման համար, բայց նա նայում է ուսման վրա միմիայն որպէս մի միջոցի վրա, որով իր զաւակները ժամանակով կարողանան հաց վաստակելու։ Ուսումը, առանց իրաւունքների, ուսումը առանց գործնական հետեւանքների հայի համար անհասկանալի է։ Ուսման վրա նա նայում է որպէս մի ջոցի վրա, և ոչ թէ որպէս նպատակի վրա։

Պետական կամ քաղաքային դպրոցը տալիս է երիտասարդներին կամ նոյն իսկ օրիորդներին այս կամ այն իրաւունք, տալիս է պետական լեզուի հմտութեան պատճառով մի միջոց կեանքի մէջ հաց ճարելու։ Իսկ ազգային դպրոցը ի՞նչ է տալիս,—ոչինչ։ Իրաւունքներ նա չէ տալիս, կեանքի մէջ ճանապարհ, ասպարէզ բացանելու նա միջոց չէ տալիս։ Հայը լաւ գիտէ թէ լոկ հայ դառնալով հայը դեռ մարդ չի համարվի կեանքի մէջ։ Պետական կամ քաղաքային դպրոցի մէջ ուսումն աւարտելով նոր սերունդը մտնում է կեանքի մէջ, եթէ այսպէս կարելի է ասել, բարոյապէս զինված։ Ազգային դպրոցից նա դուրս է գալիս անզէն, անօգնական։ Այդ պատճառով հայը անտարբեր է, անհոգ է, ժլատ է դէպի իր ազգային դպրոցները։ Միւս ուսումնարաններից տրվող իրաւունքների և միջոցների փոխարէն հայը կուզենար որ իր ազգային դպրոցն էլ գոնէ մի բան տար իր զաւակներին, որ կարողանար գրաւել նրան, կուզենար որ մի յայտնի նպատակ ունենար ուսումը և ազգային դպրոցի մէջ, քանի որ ուսումը առանց նպատակի, առանց գործնական հետեւանքի՝ ոչինչ նշանակութիւն չունի նրա համար։

Այդ նպատակը, այդ զրաւիչ բանը, այդ գործնական հետեւանքը, այդ շօշափելի արդիւնքը ազգային դպրոցների մէջ կարող է միմիայն մի բան լինել,—այն է ուսման հետ միացրած ա ր հ ե ս տ ը, որի շնորհով աշակերտը կամ աշակերտուհին ուսում աւարտելուց յետոյ, կարողանար համ իր գլուխը, համ էլ իր ընտանիքը պահել իր աշխատանքով։ Այդպիսով հայի ազգային զգացմունքն էլ պայմանաւորվում է գործնական հաշուով, շօշափելի շահով։

Եւ ճշմարիտ է՝ ամբոխի, մեծամասնութեան համար ուսումը, լուսաւորութիւնը մի բարոյական, վերացական պահանջ չէ, նա ուրիշ բան չէ եթէ ոչ կեանքի մէջ գործնական ճանապարհ բաց անելու մի միջոց։

Եւ այդ պահանջը ամբոխի համար մենք իրաւացի ենք համարում։ Հարկաւոր է բաւականութիւն տալ ամբոխի այդ պահանջին։

Հարկաւոր է վերջապէս հասկանալ որ հայը չափից դուրս հաշուող, գործնական, նիւթապաշտ ժողովուրդ է, նա գուրկ է որ և է վերացական գաղափարներից, իդէալական հակումներից, բարոյական զգացմունքներից։

Հայի համար ամեն մի բուբլ, ամեն մի կոպէկ պէտք է շահ տայ, պէտք է տոկոս բերի։ Ինչպէս կարելի է որ ուսումը իր շահը, իր տոկոսը չը տայ, մի մեռած կապիտալ, մեռած դրամագլուխ լինի։

Հարկաւոր է հասկանալ հայի այդ յատկութիւնը և անպատճառ աշխատել մտցնել ազգային թէ արական և թէ իգական դպրոցների մէջ մայրենի լեզուով մատակարարվող ուսման հետ միասին և դրական կեանքի մէջ գործադրվող, շահ տուող արհեստների մատակարարութիւնը։

Այն ժամանակ հայը անհոգ, անտարբեր, ժլատ չի լինի դէպի իր ազգային դպրոցը նա, ընդհակառակն, կը սիրի այդ դպրոցը

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱԿ ԱՐԴԱՆՈՒՇԻՑ

—

Յուլիսի 11-ին

Ձեր պատուական «Մշակ» լրագրին՝ երկայն ժամանակէ ի վեր, մեր ընդհանուր ազգին մատուցած ծառայութիւնն յիրաւի ազգասիրութեան բարձր աստիճանէ մը յառաջ կուգայ։ Բայց, ինչպէս յայտնի է, ձեր լրագրոյն մէջ, մինչև ցարդ այս վերջին թիւրքօ-ռուս պատերազմի առթիւ Ռուսիոյ պետութեան միացված այս կողմի երկիրներու և ազգայնոց վրա շատ քիչ տեղեկութիւններ գրուած կը տեսնուի. հետևաբար մեր ազգի Կ. Պոլիս կամ Թիֆլիս և այլ տեղեր բնակող գործօն անդամոց բոլորովին անծանօթ է բաւական բազմութիւն մը հայոց, որք այս կողմերս կը բնակին, վասն զի ասոնց նկատմամբ ոչ մի տեղէն լուսի թղթակցութիւն մը չը նշմարուիր։ Ուստի, կը խնդրեմ, խոնարհաբար, որ այսուհետև զիս ձեր պատուական լրագրոյն թղթակիցն համարիք Արդանուշ քաղաքի կողմի ազգայնոց վիճակը՝ ընդհանուր հայ ազգին ծանօթացնելու համար։ Եւ ասոր համար, հարկ կը համարիմ Արդանուշի բնական դրից և տնտեսական կենաց վրա նախ խօսել և ապա անցնել տեղեկութեանց։

Արդանուշ՝ Արթվին քաղաքէն՝ մօտ 30 վերստ հեռաւորութեամբ գիւղաքաղաք մըն է, չորջ 1000 բնակչօք. որոնց լեռն հարիւրը՝ հայ-կաթոլիկ է, իսկ մնացածը՝ 1828-ի թիւրքօ-ռուս պատերազմի ատեն Ախալցխայէն գաղթող թիւրքեր են։ Արդանուշ ունի իր ներքև 48 գիւղ, որոնցմէ Նորաշէնը՝ (Եէնիրաբաթ) ունի 20 տուն լուսաւորչական, որք ունեն առանձին տգէտ քահանայ մը. և գիւղից մեծագոյնն՝ Ցանձոտ անուամբ, կը բնակուի 45—50 տուն լուսաւորչականացմէ և 10 տուն կաթոլիկացմէ։ Երկու հայազգի մասն ալ ունի իր առանձին քահանայն, ամենատգէտ, կենթադրուի, և դպրոցն, առաջինները ունին վերջիններէն քիչ մ'աւելի յառաջացած, բայց այնու ամենայնիւ ամենավատ դրութեան մէջ։ Ցանձոտու հայք, իբրև պարզ գիւղացիք, մշակութեամբ կը պարապին, ունեն նաև քանի մը մանր վաճառականի, նպարավաճառի կրպակներ և դարբնոցներ, որոնք ամենն ալ հայոց ձեռքն են։ Իսկ Թիւրք բնակիչք, ինչպէս Ցանձոտի և նոյնպէս բոլոր միւս գիւղերունն՝ երկրագործք են։

Արդանուշ գիւղաքաղաքը, որ Թրքացմէ պաշտօնապէս Կեվէրնիքի բերդ ալ կը կոչուի, շինուած է գառիվերի մը վրայ, որու արևմտեան կողմը կը բարձրանայ անտառի, բարձրաբերձ ժայռ մի, որ ունի ընդարձակ մի տափարակ, որու վրայ հակայ պատերու, քառանկիւնի աշտարակներու, ամրաշէն աւազաններու, բանտերու և այլ և այլ գեղանափոր տեղուանց փլատակներ կը տեսնուին.—յիշատակք Բարձր Հայոց Տայոց գաւառին՝ որ իր ամրութեամբը մեծ հռչակ ունէր ամբողջ Հայաստանի մէջ։ Արդանուշ ունի իր շրջապատը՝ բոլորակ պարիսպ մը, երկփեղկ բերդադուռ մը, որու բարաւորին վրայ և եթ կայ եղծուած, անընթեռնելի արձանագրութիւն մը։ Գիւղաքաղաքի ստորոտէն կը վազէ Արդանուշի գետակը, որ կը միանայ Ճորոխի հետ և Բաթումի քով Սև ծով կը թափուի։ Գետակի երկու կողմը՝ ահագին ժայռեր, բլուրներ կը բարձրանան, որոնք կարծել կուտան թէ գետն ատենօք շատ մեծ ըլլալով և ճիշդ ատոնց վրայէն հոսելով, զանոնք ողողեր և հետզհետէ հարիւրաւոր կանգուն վար իջեր է։ Ասոր պարզ ապացոյցներ են ժայռերու կողմնակի երեսի վրայ եղած անթիւ քարայրներն, որոնց բերանին վրայ մարդկային ձեռօք չինուած յայտնի ամուր պատեր, ցցուած գերաններ և այլն կը տեսնուին, և որոնց մէջ, տեղւոյս ժողովուրդը թանկագին հնագիտական առարկաներ թաղուած կը կարծէ, աւանդութեամբ։ Ընդհանրապէս, Արդանուշ՝ իբրև հին բերդաքաղաք մը, ոչ սակաւ յիշատակներ ունի հնութեան, թէ քաղաքի մէջ և թէ մանաւանդ շրջակայքը։

Արթվին, Արդանուշ, Շավշէթ, Օքրօքակէթ, Փխիկուր փոքրիկ քաղաքներ, գիւղեր են, իրարմէ շատ քիչ հեռաւորութեամբ, որոնց մէջ խուռն բազմութիւն մը կայ հայոց. ասոնց մեծագոյն և կարող մասն՝ հայ-կաթոլիկ է։ Ա՛ս վերջիններն ունին յատուկ նորընտիր եպիսկոպոս մը, տէր Յովհաննէս վարդապետ Զաքարեան, Արթվինի աթոռանիստ քաղաքը, զոր ձեռնադրած է յետ պատերազմին, Էրզրումի Ստեփան եպիսկոպոս Մելքիսեդեկեանն։ Զաքարեան գերապայծառ՝ այս մօտերս փոխարքայութեան կողմանէ Թիֆլիս կանչուած էր, ուր իրեն զեկուցուեցաւ որ Կայսր արքայական նոր կարգադրութեամբ ամբողջ Կովկասու կաթոլիկ հայերն իր հովուական իշխանութեան ներքև կը ձգուին, բայց դեռ եպիսկոպոսական աթոռն ուր հաստատուիլը չէ որոշուած, վասնզի աթոռը փոխել կուզուի, հակառակ Արթվինի բնակչաց խնդրանաց և տրտմութեանց։ Իսկ լուսաւորչական հայք՝ մինչի Բաթում Կարսի եպիսկոպոսի թեմն են։

Արդանուշ՝ ոչ սակաւ նշանաւոր է իր բարեբերութեամբը։ Բուն գիւղաքաղաքը քարախիտ տեղ մըն է և կլիման վատառողջ. այնպէս որ ձմեռն բեւեռային ցուրտ կը տիրէ, իսկ ամառն հասարակածի ջերմութիւն։ Բայց գիւղերն ունին իրենց լեռնային առողջ օդն։ Երկիրն լեռնոտ է, անտառուտ, պարարտ, ջրարբի։ Գլխաւոր մշակութիւնն է հացաբոյս, ցորեն, իր ամեն տեսակովն, դարի, կորեկ և եգիպտացորեն, ընտիր ծխատոտ, բանջարանոցի բոյսեր, կաղամբ, լոբիա, սիսեռ, գաղար, բողկ, կոտիմ, ճակնդեղ, սոխ, սխտոր, սեխ, վարունգ, ձմերուկ և այլն. առատ են նաև պտղատու ծառերն։ Բայց Արդանուշի ամենէն երեւելի արդիւնաբերութիւնն է ամենապատուական գինի և օղի։ Եւ կըրնայինք հաստատապէս ըսել թէ Արդանուշի գինին աշխարհիս ամենէն ընտիր գինիներուն հետ կրնայ մրցել, թէ որ աղէկ պատրաստուելու ըլլայ։ Գինուոյ գլխաւոր տեղին է Կեօրդա գիւղը, որուն խաղողը շատ ազնիւ է, ուսկից կը հանուի յիշեալ անապակ գինին։ Նոյնպէս և անուանի է իր սաստկութեամբ (կամ տեղացւոց լեզուովն իր չարութեամբն) Արդանուշի օղին, զոր կը հանեն թուխ ըսուած պտղէն և կրնայ նմանապէս ամենաընտիր օղիներուն հետ հաւասարիլ։ Այս պատճառաւ Արդանուշ մասնաւոր խնամք կը տարուի որթոց և թթենեաց աճեցման։ Բայց ափսոս որ այդ ըմպելեաց ամենամեծ մասն՝ հոս, տեղացիք կը սպառեն, վասն

կօգնի նրան նիւթապէս և բարոյապէս, որովհետև կը տեսնի նրա մէջ իր կենսական պահանջին բաւականութիւն տուող մի հիմնարկութիւն։ Այն ժամանակ նա կը սկսի սիրել և իր մայրենի լեզուն էլ, որի օգնութեամբ նա սովորեց մի փ ե շ ա կ։

Գուցէ ոչ մի ազգ այնքան քիչ հակումն չունի դէպի իդեալականը, դէպի պլատոնականը, որքան հայը։ Հայը ամէն բան գնահատում է օգուտի, շահի գնով։ Իր ազգը սիրելուց, իր մայրենի լեզու սովորելուց առաջ էլ հայը մտածում է, լաւ կշռում է՝ արդեօք շահ կայ ազգը սիրելուց, արդեօք օգուտ կայ հայ լինելուց, արդեօք շահ կայ մայրենի լեզու սովորելուց,—և ը ս տ այ ն մ վարվում է....

Ի՞նչ արած. պէտք է օգուտ քաղել այդ հակումներից։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Յուլիսի 16

Ի լրոյ տեղեկացայ, որ Աստրախանի թեմի մի քանի դպրոցների վարչութիւնքը, տարակուսանաց մէջ են ի մասին այն փողերի որ ես ըստացել էի ճանապարհի ծախսերի համար թեմական տեսչի պաշտօնը վարելու ժամանակ։ Ի ցրումն ամենայն տեսակ տարակուսանաց և ի միամտութիւն դպրոցական վարչութեանց յայտնում եմ, որ ես ճանապարհածախսի ամբողջ գումարը 250 ռուբլ. որը ըստացել էի ոչ թէ դպրոցական վարչութիւններից անմիջապէս, այլ Ղզլարի հոգևոր կառավարութիւնից, ուր ուղարկված էին այդ գումարները իւրաքանչիւր դպրոցներից առանձնապէս, վերադարձուցի նոյն հոգևոր կառավարութեանը լրիւ, ի ստուգութիւն որոյ ունիմ և հետևեալ ապահովագիրը կառավարութեան նախանդամից ստացած։ «Ապահովագիր. 1881 ամի, ի 24-ն մարտի տուաւ այս ապահովագիր ի փոխանորդէ սեղոյս և նախանդամոյ Ղզլարայ հայոց հոգևոր կառավարութեան Ադամ վարդապետէ Տէր Նիկողայոսեանց, նախկին վերատեսչի ուսումնարանաց Աստրախանայ թեմին Աստուածատրոյ Կաճկաճեանց առ այն. զի ընկալաւ ի նմանէ զերկուհարիւր յիսուն ռուբլի, որ տուեալ էր նմա վասն ճանապարհածախսուց ի դէպս չրջելոյ նորա ի թեմին առ ի առաքել զայս գումար վիճակաւոր առաջնորդի թեմիս Տեառն Գէորգայ սրբ-եպիսկոպոսի»։ Որպէս հաստատ գիտեմ այդ գումարը ուղարկված է Աստրախանի թեմի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Վ ե հ ա պ ե տ ե ա ն ց ի ն, որի մօտ և այժմ գտնվում է այդ գումարը։ Դպրոցական վարչութիւնքը թող դիմեն վիճակաւոր առաջնորդին, եթէ կամին յետ ստանալ իրանց դպրոցների պատկանեալ գումարը։

Ա. Կաճկաճեան

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ. «Հոգևոր դպրոցի տեսուչը հրաժարվում է իր պաշտօնից։ Ալէքսանդրապօլցիք խնդրում են նրան մընալ, բայց նա չէ համաձայնվում։ Այժմ նա Թիֆլիս է, այնտեղ էլ հեռագիր ուղարկեցին, խնդրելով որ դարձեալ ընդունի պաշտօնը։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այստեղ խօսում են ամենախոնարհ խնդիրք ուղարկելու Թագաւոր Կայսրին Նրա ողորմածութեան ուշքը Ալէքսանդրապօլի գաւառի գիւղացիների այժմեան անհող դրութեան վրա դարձնելու և չնորհ խնդրելու Նորին Մեծութիւնից գաղթելու նոր նուաճած երկիրները։»

—

ԹԻՖԼԻՍԻ ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան խնդրում է մեզ յայտնել որ դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ «Բօբինզօնի պատմութիւնը» թարգմանութիւն քահանայ Ա. ղանեանցի։ Գինը 60 կօպէկ է։ Նոյնպէս դուրս եկաւ մամուլի տակից նոյն ընկերութեան հրատարակութեամբ Մօսկվայում տպված «Գամառ-Քաթիպայի բանաստեղծութեանց ժողովածուն» հեղինակի պատկերով։ Շուտով այդ գիրքը կը սատցվի Թիֆլիսում։ Գինը լինելու է 50 կոպէկ, իսկ փառակազմ 1 ր. 20 կոպէկ։

—

Պ. Ա. Թոխմախեանի դասախօսութիւնը «Թիւրքաց Հայաստանի մասին» որ տպվեցաւ «Մշակի» մէջ, այժմ հրատարակվեցաւ առանձին գրքոյկով պ. Ալէքսանդր Մէլիք-Հայկազեանի ծախսով։ Գրքի գինը 30 կոպէկ է և ծախվում է պ. Զաքարիա Գրիգորեանի «Կովկասեան» գրավաճառանոցի մէջ և նոյնպէս «Մշակի» խմբագրութեան մէջ։ Բրոշիւրը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը կրում է «Հայրենիքի պահանջներ», իսկ երկրորդը «Հայ գիւղացի» վերնագիրը։

—

Նշանաւոր ռուս բանաստեղծ Լերմոնտովի մահվան քառասուն տարվայ տարեդարձի տօնելու ժամանակ Պիատիգորսկի ռուս հոգևորականութիւնը նախ հրաժարվեցաւ օրհնել բանաստեղծի կիսարձանը և եկեղեցում հոգեհանգիստ կատարել նրա յիշատակին, բայց ռուս եպիսկոպոսը հրամայեց քահանաներին թէ հոգեհանգիստ կատարել և թէ օրհնել Լերմոնտովի կիսարձանը։ Այժմ «Русскій Курьеръ» հաղորդում է որ ռուսաց սրբազան Սինոդը այդ գործը քննելուց յետոյ արդարացրեց Պիատիգորսկի քահանաներին, որ նրանք հրաժարվում էին եկեղեցական արարողութիւն կատարել բանաստեղծի յիշատակին։

—

Մեզ գրում են որ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գծի Բէժաթուբան կայարանից դէպի Փոթի վեց կայարանի տարածութեան վրա գիծը փչացել է սարսափելի հեղեղից և գնացքների երթևեկութիւնը այդ տեղի վրա առ այժմ դադարեցրած է։ Իսկ Փոթիի մէջ գետեզերեայ տեղերը բաւական մեծ տարածութեան վրա ծածկվել են ջրով Բիօնի յորդանալու պատճառով։

—

Թիֆլիսում, յուլիսի 15—16-ին պատահած մեծ անձրևի և հեղեղի ժամանակ քանդվել են մի քանի հին տներ և նոյն հեղեղից խեղդվել են մի քանի մարդիկ։ Այսպիսի դէպքեր լսվում են և Անդրկովկասի ուրիշ տեղերից։

—

Էջմիածնի կանցլէր եպիսկոպոս Մանկունու լիազօր դեսպան Թիֆլիսում, վարդապետ Մամբրէն, որ առաջ ընակվում էր Սուրբ-Սարգիս եկեղեցուն կից անչուք սենեակների մէջ, Նորերումս, Ազգապիրեանց Գրիգոր եպիսկոպոսի գնալուց յետոյ, տեղափոխվեցաւ առաջնորդարանի չքեղ սենեակները։ Ուրեմն պարոն Մամբրէն այսուհետև աւելի ևս հաստատվեցաւ Թիֆլիսի լիակատար առաջնորդ։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Քիշիչայ լեռնային գետակը իր ուղղութիւնը փոխել է դէպի քաղաքի կենտրոնը։ Շահդաղում ևս սարսափելի մեծ ջրեր են գոյացել։ Բաւական է մէկ անձրևային հեղեղ և Քիշիչայ, Ղուրուչայ և Կոճան գետակները յորդանալով և քաղաքի մօտ միանալով, կարող են միանգամայն Նուխին սրբել, տանել։ Անտարբեր Նուխեցիների ուշադրութիւնը դարձնում ենք այս վտանգի վրա. կարող է յետոյ ուշ լինել։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են որ տէր Սիմէօն Տէր-Պողոսեանը, բարկացած «Մշակի» թղթակցի վրա գիշեր ցերեկ Սողոմոնի գիրքը և Էֆիմերդին է կարդում, որպէս զի այդ գրքերի գուշակութիւնների օգնութեամբ գտնի թէ ով է «Մշակի» Նուխու թղթակիցը և գտնելուց յետոյ նրա բերանը կապէ։

—

«Русскій Курьеръ» լրագրին Ս. Պետերբուրգից հեռագրում են որ դիտաւորութիւն կայ թոյլ տալ գինուորականներին ծառայութիւնից դուրս հանել քաղաքական չորերը։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Մի հայ երիտասարդ քանի մի տարի է արդէն մօտակայ գիւղերից մինում պակված է մի մալական աղջկայ հետ։ Այժմ կնոջից մի երեխայ է ծնվել։ Երիտասարդ հայրը դիմելով իր ծանօթ ռուս աստիճանաւորներին հարցրեց արդեօք պարտաւոր է երեխային մկրտել ռուս կրօնով. ռուս ծանօթները նրան բացատրեցին որ այդ նրա կամքից է կախված, քանի որ մալականները աղանդաւորներ են և չեն պատկանում տիրապետող ուղղափառ եկեղեցուն, ուրեմն երեխային որ ծնված է մալականուհուց կարելի է մկրտել և հայ-լուսաւորչական։ Օրէնքը ստիպում է ուղղափառ մկրտել միայն այն դաւակներին, որոնք ծնվում են ուղղափառ դաւանութեանը պատկանող հօրից կամ մօրից, իսկ երբ օրինակ, հայրը հայ է, իսկ մայրը մալականուհի, կամ այլ աղանդաւոր, որ չէ պատկանում պետական եկեղեցուն, օրէնքը չէ կարող ստիպել երեխային ուղղափառ մկրտել, այլ դա ծնողների կամքից է կախված, ինչպէս բողոքականների, կաթոլիկների և այլ դաւանութիւնների մէջ։ Այսպիսով հայը նոր հասկացաւ իր իրաւունքը և մկրտեց իր երեխային լուսաւորչական կրօնով։»

—

«Вѣстникъ Европы» ամսագրի յուլիսի տետրակը ամբողջութեամբ ուշադրութեան արժանի է։ Մանաւանդ նշանաւոր են այդ տետրակի մէջ երկու յօդուածներ. Русскіе раціоналисты (Ռուս բացիօնալիստներ) և Ретноградная печать (Ցետադէմ մամուլ)։ Առաջինը խօսում է ռուս աղանդների, մանաւանդ շ տ ո ւ ն դ ի ս տ ա ն ե ր ի մասին, երկրորդը՝ ռուս յետադէմ մամուլի մասին, մանաւանդ Կատկովի և Ակսակովի ՀԱՍԱԿԱՐ գործունէութեան մասին։

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են հետևեալը. «Վիճակի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Վ ե հ ա պ ե տ ե ա ն եկել էր Ղզլար, իբր թէ բ է վ ի զ ի ա անելու այդ քաղաքի եկեղեցիների և դպրոցների մէջ, բայց իրօք, ապրելով մի ամսից աւելի այստեղ, նրա արած գործը եղաւ այն, որ հրաւէրներ վայելեց մի քանի աղանների մօտ, ճաշեց նրանց այգիներում իր տիրացուների հետ, ուրիշ ոչինչ։ Դպրոցի վարչութիւնը իր կօշիկները մաշեց սրբազանի

---

զի կրնայ գտնուիլ Արդանուշեցի մը—հաց չուներցող,— բայց չը կայ այնպիսին իրենց մէջ որ գինի և մանաւանդ օղի չունենայ իր տունը։

Արդանուշի գլխաւոր արտադրութիւնքն են ուրեմն ամեն կերպ հացաբոյս և անոնց ալիւրը, բանջարանոցի բոյս, ծխախոտ, բուրդ, գինի, և օղի, և այլն։ Այս բերքերը կը խրկուին Արթվին, Բաթում, Թրապիզոն, Կ. Պոլիս, Կարս, Կեօյա և Փէնէք քաղաքներն։ Բայց ամենէն հարուստ և կարևոր արտահանութիւնն է ընտիր ընկուզի կոճղ, կտաւատ և եղի, կովի, այծի, ուլի, գայլի, աղուէսի, խոզի և գոմէշի մորթ, որոնք Թրապիզոնի միջոցաւ մինչև Կ. Պոլիս, Մարսելեա, Փարիզ կուղարկվին։ Արդանուշէն կելլէ նաև ջրաղացի երկանաքար և կը խրկուի Արդահան, Փենէք, Կեօյա, Կարս և այլն։ Իսկ վաճառաբերութիւնքն են՝ կտաւեղէն, մետաքսեղէն, չուխա, ապակեղէն, չիթ, գործիներ, խահվէ, շաքար, ոգևոր ըմպելիք, բրինձ, բամբակ և այլն։

Արդանուշ՝ տեղական ձեռագործներու մասին ալ բոլորովին ոչինչ չէ։ Հոս կը գործեն ազնիւ, փափուկ դենջակներ, մետաքսէ և բամբակէ, զորոնք, ըստ արևելեան սովորութեան՝ կանայք կը կապուին։ Այս դենջակներէն առատապէս կը տարուին Շավշէթի, Կեօյայի և Փէնէքի աւանաց կողմերը։ Կը գործեն նաև ընտիր բամբակեղէն կերպաս մը, տեղացւոյմէ մ ա ն ո ւ ս ա կոչուած, որ երևելի է իր դիմացկունութեամբ և մեծ քանակութեամբ կը սպառուի այս կողմերը, նուրբ անձեռոցներ, մետաքսեղէն այլ և այլ գործուածներ, ամուր, սպիտակ, կապոյտ, կարմիր կտաւներ, մաղեղէն կապերաներ, և տեսակ մը մաղեղէն կերպաս—որ բոլոր Արդանուշի և շրջակայից արանց զգեստի տեղ կը ծառայէ,—կանացի լաչակ ու փափուկ՝ բրդեայ կամ եւրոպական մանածէ դիպակ մը, զոր է հ ր ա մ կանուանեն, և կանայք անով գլխէ մինչև ոտք կը ծածկուին։ Այս յիշածներս բոլորն ալ հայկական իդական սեռի ձեռագործներ են, որուն վրայ կը նշմարի միշտ, աւելի քան զարս, ձգտում մը դէպի նորն և լաւն։ Բայց ափսոս որ այս ձեռագործք այնչափ չեն փնտռուիր, որ տեղացիք ևս ամենայն հոգով անոր վրայ աշխատին և զայն կատարելագործելու ջանան։

Ինչպէս վերն յիշեցի, Արդանուշ՝ 900-ի մօտ հայ բնակիչ կայ, որոնց մեծ մասը վաճառականութեամբ կապրին։ Ունեորներն բուն քաղաքին մէջ ունին իրենց յատուկ խանութներն, իսկ տկարներն՝ նոյն հարուստներէն ապրանք գնելով, կառնուն կը տանին մօտակայ գիւղերն, ուր փողով, ուտեստով, կամ կենդանեօք ծախելով զայնս, իրենց ապրուստը կը հոգան։ Թիւրքիոյ իշխանութեան ժամանակ, վաճառականք Կ. Պոլիս կերթային վաճառք բերելու, բայց հիմայ Թիֆլիս կերթան. այնպէս որ Թիֆլիսի մէջ արդանուշեցի կամ արթվինցի վաճառական երբէք պակաս չեն։ Ժողովրդեան միւս մասն կը պարապի արուեստներով, դերձակութեամբ, կօշկակարութեամբ, նպարավաճառութեամբ, ներկարարութեամբ, երկաթագործութեամբ։ Այս վերջինս մեծապէս յառաջացուցած է Արդանուշի մէջ պ. Աբրահամ Աբրահամեան, որուն վրայ ուրիշ անգամ առիթ կունենամ խօսելու, այժմէն այսչափ միայն ըսելով որ դա՝ թէև անուս՝ այսուամենայնիւ որչափ որ ընտիր դարբին ու երկաթագործ է, նոյնչափ ալ հանճարեղ միտք և միակ ազգասիրութեան ոգի ունի այն ամբողջ հասարակութեան մէջ, որոյ առաջնորդք են արթվինցի տէր Յովհ. Ակինեանի պէս 5—6 տարի Փարիզի ուսումնարանը կեցող և ուսման ու ազգի վրայ գաղափար չունեցող և հայերէն նոյն իսկ պարզ կարդալ մը չը գիտցող վարդապետք։

Թիւրքիոյ իշխանութեան ժամանակ երբ բոլոր Փոքր-Ասիա թիւրքաց հարստահարութեանց տակ կընկճէր, կրնամ ըսել, որ Արդանուշի հայը ամենէն քիչ բռնութեան ենթակայ են եղած։ Եւ ասոր պատճառն է հայոց և թրքաց մէջի անձուկ, անքակտելի յարաբերութիւններն, որոնք այս երկու այլակրօն, այլացեղ ազգերը կարծես ի մի ձուլած էին։ Մին միւսին անհրաժեշտ հարկաւորութիւն ունէր. վասն զի ինչ որ մէկն ունէր, մէկալին քով այն կը պակսէր և ընդհակառակաբար։ Օրինակ բոլոր նահանգի մէջ՝ վաճառականք, դերձակք, կօշկակարք, դարբինք, ներկարարք, նպարավաճառք՝ միայն հայերն էին։ Իսկ երկրագործք, պարտիզպանք, անասնաբոյծք, այսինքն հացաբոյս, բանջարանոցի բոյս, ընտանի կենդանիք, եղ, թան, պանիր, պտուղ և այլն այսպիսի կարևոր պիտոյք ունեցող (թէև հայոցմէ ալ կան, բայց) մեծագոյն մասամբ թրքերն էին։ Ուստի հայն որ ուզէր իր կալուածներն հոգալ, հացաբոյս, բանջարեղէն, կաթնեղէն և այլն ունենալ, անպատճառ թրքին պիտոր դիմէր։ Իսկ թիւրքն ալ, փոխադարձաբար թէ որ ուզէր զգեստեղէն առնուլ, կարել տալ, ոտնաման գնել, երկրի զանազան՝ իրեն աւելորդ բերքերն ծախել, լաթ ներկել տալ, և ամենակարևոր աշխատութեան գործիներն ունենալ, կամ զանոնք նորոգել տալ, նաև փողի հարկաւորութեան միջոցին՝ անհրաժեշտ հային պէտք է դիմէր։ Մին առանց միւսին չէր և չի կրնար ըլլալ։ Այս պատճառաւ երկու կողմն ալ, նաև չահախնդրութենէ շարժեալ, իրար վրայ մեծ յարգանք, համակրութիւն և բարեկամական սէր ունէին։ Ուստի թէ որ հայերն թրքաց ժամանակ հարստահարութիւն կը կրէին, այդ աւելի օտարաքաղաքացի ծառայողներէն էր, քան թէ բուն իսկ տեղացիներէն, որոնց մէջ շատ քիչ կար այնպիսի թիւրք մը, որ հային կարօտութիւն և տալիք չունենար։ Թրքական ժամանակի այդ նկարագրեալ վիճակն կը շարունակէ հիմայ ևս։ Սակայն այս վերջի պատերազմէն յետոյ մի քանի կրօնամոլ թրքաց գրգռելովն գիւղացւոց մէջ գաղթականութեան խորհուրդն էր մտած։ Բայց իրենց այդ ընկերակից բարւոքեալ դրութիւնը մտածելով, և չնորհիւ աչալուրջ կառավարութեան Արդանուշի այժմեան քաղաքապետ պ. Յարութիւնեանցի, որ ազնիւ, անաչառ և խոհեմ կառավարիչ մըն է, հիմայ այդ խորհուրդներն եթէ բոլորովին չէ, գոնէ ամենամեծ մասամբ անհետացած են, մանաւանդ թէ ցիրցան գաղթողներն ևս ետ դարձան և հետզհետէ դառնալու վրայ են։

Ահա առ այժմ Արդանուշի հայազգեաց տընտեսական դրութեան վրայի այս հակիրճ տեղեկութեանց, ձեր պատուական լրագրոյն մօտակայ թերթից էջերէն մէկու մէջ զետեղուիլը խընդրելով, կը խոստանամ միւս նամակումս ուրիշ ոչ նուազ կարևոր ծանօթութիւնք հաղորդել։

Ա. Ս.

մօտ գնալ գալով օրիորդական դպրոցի տան չինութեան գործը գլուխ բերելու համար, բայց տեսնելով առաջնորդի անտարբերութիւնը դէպի դպրոցի ինտերէսները, յետ քաշվեց, որովհետև վարչութեան ասելիքը՝ ձայն բարձրոց յանապատի էին վիճակաւորի համար։»

—

«Մշակի» անցեալ № 135 մէջ Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետի վրա յօդուածը գրվեցաւ Ալէքսանդրապօլից, որտեղ այժմ հայը սուրբը քարոզներ է անում և փողեր ժողովում։ Սխալմամբ յօդուածի տակ չը տպվեցաւ Ալէքսանդրապօլ բառը։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Յովհաննէս Նազարեանցի «Հայոց լեզուի ուսուցիչ» գրքոյկը։ Տպված է Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ թւին։ Գինը 40 կոպէկ է։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՒՐՔԻԱ

—

Բ. Դրան համար դարձեալ մի դժուարութիւն է ծագում։ Այս անգամ դրա պատճառը Բօղօպի սարերի մէջ գտնված չորս գիւղերն են, որոնք պէտք է միացրած լինեն Արևելեան-Ռումելիայի հետ, բայց դեռ չեն միացրած։ Անգլիական դեսպան լորդ Դէֆֆերին առաջարկեց Թիւրքաց կառավարութեանը կատարել այդ խոստումը։ Օտար պետութիւնների միւս ներկայացուցիչները, բացի ռուսաց դեսպանից, չեն միացել այդ առաջարկութեան հետ, ասելով, որ Նրանք իրանց կառավարութիւններից հրահանգների են սպասում։ Նրանց կարծիքով, եթէ այդ գիւղերը միացվեն Արևելեան-Ռումելիայի հետ, պէտք է սահմանները նորից ուղղվեն, որ մեծ դժուարութիւններ կը պատճառէ։

Թիւրքաց կառավարութիւնը Սկուտարիի նահանգի բնակիչներից պահանջեց սկզբից հատուցանել երկու տարվայ հարկը և մասնակցել կառավարութեան նոր փոխառութեանը։ Պրիզրենդի մէջ հանդստութիւնը դեռ վերջնականապէս ապահոված չէ և Դերվիշ-փաշա չէ կարողանում այնտեղից հեռանալ։

Նորերում „Köln. Zeitg.“ լրագրի թղթակիցը շատ վատ կարծիք յայտնեց Արևելեան-Ռումելիա ուղարկված ռուս օֆիցերների գործունէութեան մասին։ Նրանց թիւը 50 էր հասնում, բայց 18 օֆիցեր մի տարվայ ընթացքում ծառայութենից արձակվեցան, որովհետև նրանք վատնել էին պետական գանձարանից բաւական նշանաւոր գումար։ Նրանցից մէկը այդ գործի համար ոչ թէ միայն չը պատժվեցաւ, այլ և ռուսաց հիւպատոսի միջնորդութեան շնորհիւ երեք ամսով արձակուրդ ստացաւ, պահելով իր ռոճիկը։

Միհադ-փաշա հիւանդացել է։ Սուլթանը իր բժշկին ուղարկեց նրա մօտ, բայց նա, թունաւորվելուց վախենալով, հրաժարվեց ընդունել այդ բժշկի տուած դեղը։

Թէսսալիայի շրջանները ցունամանին յանձնելը յետաձգվեցաւ Թիւրքաց բամբասանի ասնի պատճառով։ Բ. Դուռը երկու շաբաթ ժամանակամիջոց խնդրեց և եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները համաձայնեցին, թէպէտ գիտէին, որ Թիւրքաց կառավարութեան այդ պահանջը մի դիպլոմատիական խորամանկութիւն է։ Ժամանակամիջոցի ձեռք բերելը Կ. Պոլսի մէջ քաղաքականութեան գլխաւոր նպատակն են համարում, թէպէտ թէ Թիւրքիայի մէջ և թէ Արևելքի մէջ առհասարակ չը գիտեն ժամանակից օգուտ քաղել։ Հին պատմական սովորութեան համեմատ Թիւրքերը միշտ յոյս են դնում անսպասելի և ձեռնտու պատահարների վրա, որոնք գործերի ընթացքին կարող են այլ ընթացք տալ։ Նրանք սպասում են քաղաքական նոր համաձայնութիւնների, նոր դաշնակիցների, մեծ պետութիւնների անբաւականութիւնների և վերջապէս յոյս են դնում արևելեան „գուցէի“ վրա։ Այդ պատճառով նրանք միշտ յետաձգում են իրանց խոստումների և պարտականութիւնների կատարելը։ Երկու շաբաթվայ ընթացքում, նրանց կարծիքով, շատ բան կարող է պատահել։ Անգլիան արևելեան հարցի վերաբերութեամբ կարող է անհամաձայնութիւն ունենալ Ֆրանսիայի և Աւստրօ-Ունգարիայի հետ և նորից Թիւրքիայի կողմը անցնել։ Գերմանիան և Իտալիան կարող են փոխել իրանց դիտաւորութիւնները, 'ի նկատի առնելով Ֆրանսիայի սպառնալիքները, կամ թէ չէ Եւրոպայի մէջ կարող է այնպիսի անսպասելի անցք պատահել, որ ամենքը կը մոռանան յոյն-թիւրքական վէճը։ Թիւրքաց քաղաքագէտները առհասարակ այդպէս են դատում և նրանց ենթադրութիւնները շատ անգամ արդարացել են։

### ԱՆԳԼԻԱ

—

Սօցիալիստների կոնդրեսը, որ արդէլվեցաւ Ցիւրիխի մէջ, կայացաւ Լօնդօնում և գաղտնի նիստեր ունեցաւ, որոնց մասնակցում էին մօտ 144 մարդ։ Նորերում նրանք հրապարակական ժողով ունեցան Կենվենդ-Սարիսի մէջ Էդվին Դենոնի նախագահութեամբ և եւրոպական բոլոր երկիրների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Ճառեր խօսվեցան գերմանական, անգլիական և ֆրանսիական լեզուներով։ Ժողովի գլխաւոր նպատակն էր յայտնել, որ սօցիալիստների խաղաղ գործողութեան ժամանակամիջոցը խօսքով և գրչով վերջացել է, որովհետև բոլոր թէ միապետական և թէ հանրապետական կառավարութիւնները արգելում են բանւորների ազատութիւնը։ Ամենից առաջ խօսեց ամերիկացի օրիորդ Լեկոյնտ, որ ժողովին տեղեկութիւններ հաղորդեց Ամերիկայի մասին։ Նրա խօսքերի համեմատ Ամերիկայից ոչինչ լաւ բան չէ կարելի սպասել, որովհետև այնտեղ գումարը տիրապետում է և եթէ մի բան արուած է, դա էլ ոյժի օգնութեամբ։ Ամերիկացուհուց յետոյ խօսեց Ֆրանսիուհի Լուիզա Միշել։ Նա յայտնեց, որ շուտով ոսկէ դարը գայ և համոզում էր իր լսողներին ոչինչ չը խնայել այդ ժամանակին շուտով հասնելու համար։ Մի ուրիշ Ֆրանսիացի անուանեց Ֆրանսիական հանրապետութիւնը նոր ձև բռնաւորութեան։ Ամերիկայի, Գերմանիայի սօցիալիստների ներկայացուցիչը նախատում էր ամերիկական հանրապետութեան նախագահական ձևը։ Ժողովի մէջ անբաւականութիւն յայտնվեցաւ „Freiheit“ լրագրի խմբագիր Մօսին դատապարտելու առիթով։ Ժողովի անդամներից մէկը առաջարկեց կախել այն բոլոր խմբագիրներին, որոնք պահանջում էին Մօսի պատիժը։

Լրագիրները հաղորդում են, որ շուտով Գլադստօն լօրդերի ժողովի անդամ կընտրվի, որովհետև կալուածական օրէնքի անցկացնելը համայնքների ժողովի մէջ և նրա առիթով եղած վիճաբանութիւնները շատ խանգարեցին ծերունի մինիստրի առողջութիւնը։

Գլադստօն համայնքների ժողովի պարապմունքների վերջանալուց յետոյ կը ստանայ լօրդի կոչում և այնուհետև հանգիստ կը գործէ։ Այս դէպքում մինիստրութեան անդամ կընտրվի Գոշէն, որ Գլադստօնի քաղաքական ամենամտերիմ բարեկամներից և աշխատակիցներից մէկն է։

### ԳԵՐՄԱՆԻԱ

—

Իշխան Բիսմարկ նորերում մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ յայտնեց, որ եթէ գերմանական բայխստագը չի հաստատի նրա առաջարկած հարկերը և տնտեսական նախագիծները, նա այնքան անգամ կարձակէ պարլամենտը մինչև կազմվի իշխանին ցանկալի մեծամասնութիւնը։

Գերմանական լրագիրները տպեցին իշխան Բիսմարկի հետևեալ նամակը, որ նա գրեց „արմատական ազատամտութիւն“ վերնագրով բրօշիւրի հեղինակին։ „Շնորհակալ եմ ձեր ուղարկած բրօշիւրի և նրան աւելացրած մի քանի տող նամակի համար։ Ձեր պատմական փաստերը և նրանց լոգիկական հետևանքները շատ յարմար են մեր ժամանակներում, երբ մարդիկ բոլորովին մոռացել են մեր հայրենիքի նախկին դրութիւնը և երբ նրանք, որոնք չը կարողացան ոչինչ բան անել, աշխատում են թունաւորել մեր համաքաղաքացիների ուրախութիւնը և արգելք լինել կայսերութեան զարգացմանը և առաջադիմութեանը։ Ինձ անձնականապէս չափազանց հետաքրքրեց ձեր նկարագրած ճիշդ պատկերը այն ժամանակների, որոնց հետ կապված է իմ երիտասարդութիւնը։ Ես հաւատացած եմ, որ մեր ամբողջ սերունդը կը կարդայ ձեր բրօշիւրը այնպիսի բաւականութեամբ, ինչպէս ես կարդայի։“

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզից լրագիրներին յուլիսի 23-ից հաղորդում են որ պատգամաւորների նոր ժողովը սրանից յետոյ ոչ թէ 535 անդամներից կը բաղկանայ, այլ 557 անդամներից։ Պատգամաւորների այժմեան ժողովը արդէն այդ բանի մասին իր համաձայնութիւնը տուեց։ Սենատի յանձնաժողովի մեծամասնութիւնն ևս համաձայն է։

—Բէյտերի ընկերութեանը, յուլիսի 22-ից, Դուրբանից հեռագրում են հետևեալը. «Թագաւորական յանձնաժողովի պատրաստած դաշնագրութեան նախագիծը իսկապէս բօէրներին վերադարձնում է բոլոր Տրանսվալը։ Բոլոր գումարը, որ յանձնաժողովը պահանջում է Տրանսվալի կառավարութիւնից 500.000 ֆունտ ստերլինգից աւելի չէ։ Բօէրները համաձայն են վճարել այդ գումարը։ Բօէրների կառավարութիւնը դեռ ևս չէ ընդունել այդ դաշնագիրը, որովհետև տեղական և ֆինանսական հարցերի քննադատութիւնը խիստ շատ ժամանակ է խլում։ Տրանսվալեան ֆոլկսրադը (ժողովրդական խորհուրդ) ինչպէս լսվում է, շուտով կընտրվի։»

—Լրագիրներին գրումեն, որ անգլիական պատգամաւորների ժողովի յուլիսի 23-ի նստի մէջ վերջացաւ իրլանդական հողային բիլլի քննադատութիւնը, որի պատճառով 33 նիստ էր կայացել այդ հարցի քննադատութեան ընթացքում։

—Վիէննայի «Polit. Corresp.» լրագրին, յուլիսի 20-ից հաղորդում են. «Այսօր եռանդոտ կերպով հերքվեցաւ մի քանի օտար լրագիրների հաղորդած այն լուրը, իբր թէ Աւստրիան պատրաստութիւններ է տեսնում Նովոբազարեան սանջակը և Կոսսովեան վիլայեթը գրաւելու համար։ Այդ պատճառով յիշեցնում են, որ դեռ նորերում, աւստրօ-ունգարական դեսպանը Կ. Պոլսում, բարձր Կալիցէ, սուլթանի հետ խօսելու ժամանակ յայտնեց, որ Աւստրօ-Ունգարիան ոչինչ պատճառներ չունի օգտվել Նովոբազարը գրաւելու իր իրաւունքից։»

—Վիէննայի «Polit. Corresp.» լրագրի Փարիզից ստացած տեղեկութիւնն այն բանի մասին, թէ խօսում են Ֆրէյսինէին նշանակել Ալժիրիայի գեներալ-նահանգապետ, անհիմն չէ։ Նա այդ պաշտօնը հրեի ընտրութիւններից յետոյ կըստանայ։ Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնները բաւականացուցիչ են։

—Բէյտերի ընկերութեանը հաղորդում են, որ պատգամաւորների ժողովում սէր Ջարլզ Դիլկ յայտնեց. «Բրիտանական ներկայացուցիչը թէհրանում հաղորդեց, որ Կօկանը Ռուսաստանի հետ միացնելու լուրը ուղիղ չէ։ Հարց է զարթել այն բանի մասին, թէ արդեօք ռուս-պարսկական նոր սահմաններ անցկացնելու վերաբերութեամբ բանակցութիւնների ժամանակ, Անգլիան պէտք է իր ներկայացուցիչը ունենայ, եթէ այդպիսի բանակցութիւնները կը սկսվեն։ Մենք լսեցինք, որ այդ բանակցութիւնները միայն մի քանի ամսից յետոյ կը սկսվեն։»

## ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Порядокъ» լրագրին ուղարկված է հետևեալ նամակը. «Ես անձամբ համոզվեցի, թէ որ ասիճանի նրբութեան են հասել երկաթուղեան աւազակների արարքները։ Անցքը պատահեցաւ Ս. Պետերբուրգ-Վարշավեան երկաթուղու մէջ։ Ես անցեալ ամսվայ 25-ին դուրս եկայ Վիլնա քաղաքից և գիշերվայ գնացքով ճանապարհ ընկայ դէպի Ս. Պետերբուրգ,—և որովհետև երկրորդ կլասում (երկրորդ կլասի տոմսակ ունէի) քիչ ժողովուրդ կար, ես կարող էի յարմար կերպով տեղաւորվել և իսկոյն քնեցի։ Ունեցած փողերս (81 ր. կոպէկներով) պահված էին ճանապարհի սակվояժի մէջ, որը, քնելու ժամանակ, բարձիս տակը դրեցի, յուսալով, որ այդ նախազգուշութիւնը բաւական կը լինի գողերի դէմ ինձ ապահովելու համար։ Ճիշդ է, որ զարթնելով, ես սակվояժը գտայ իր տեղում, միայն չը մտածեցի տեսնել, արդեօք փողերը մէջն են, թէ չէ։ Այն ինչ ես ինձ սատիկ տկար էի զգում. գլուխս ցաւում էր և պոյտ էր գալիս, իսկ զարթնելու րօպէին ատամներս այնպէս սեղմված էին, որ բաւական այժ գործ դրի նրանց բաժանելու համար։ Ամբողջ օրը բերանս ոչինչ չը կարողացայ առնել, և այդ պատճառով ամբողջ ճանապարհի վրա փող չը հարկաւորվեցաւ ինձ։ Միայն Պետերբուրգում հարկաւորվեցաւ ինձ փող։ Եւ ինչպէս զարմացայ, երբ բացելով քսակս, մէջը ոչ մէկ բուրլ չը գտայ։ Նայելով ինձ, ես տեսայ, որ ոսկէ բրոշկա են հանել ինձանից, և բացի դրանից կտրել են ոսկեայ պարանջանի բալանիքը։ Վերջին հանգամանքը վախեցրեց և զարմացրեց ինձ. ես մինչև չատ արթուն եմ քնում և հարկաւոր է կամ մեծ ճարպիկութիւն գողերի կողմից, կամ հիւանդոտ-խորքուն իմ կողմից, չը զգալու համար, թէ ինչպէս էին կոտրում ապարանջանի բալանին ձեռքիս վրա։ Դեռ ես ինձ վատ զգալով, ես գիմեցի բժշկին, որը և բոլոր բանը բացատրեց ինձ. ես խլորոֆորմի (քնացնող դեղ) ազդեցութեանն էի ենթարկված եղել։ Խնդրում եմ այս իմ նամակին տեղ տալ լրագրում, որպէս նախազգուշութիւն սրա նման դժբաղդութիւնների դէմ։ Փողերից և իրերից զրկվելով, ես դեռ առողջութիւնս էլ կարող եմ զոհել։ Շատ կարելի է իմ նամակը այլ լրագիրներն ևս կարատապեն, որով, Վարշավա—Պետերբուրգեան երկաթուղով գնացող բազմաթիւ ճանապարհորդներին կազատեն գողերից, և չատ կարելի է մինչև անգամ մահից խլորոֆորմով քնացնելու ժամանակ։»

***

Նախկին մեծ վեզիր Մէհմէդ-Ռուշտի-փաշան, որ մեղադրված է սուլթան Աբդուլ-Ազիզին ընպանողների ընկերակցութեան մէջ, իր ծառայութիւնը սկսեց որպէս Թիւրքաց զօրքի հասարակ զինուոր։ Մէկ օտարոտի դէպքի շնորհիւ, նա գրաւեց սուլթան Մահմուդ II-ի սէրը, և յետոյ նրա առաջին բարեկամը դարձաւ։ Սուլթանը մէկ սիրելի օղալիսկ ունէր, որի ոչ մէկ խնդիրքը անկատար չէր թողնում։ Մի անգամ, պալատի բակում, կ. Պոլսում, մտաւ փոքրիկ սավօեացի գիտնական կապիկի հետ միասին և իսկոյն հարեմ կանչվեցաւ։ Օղալիսկը խնդրեց սուլթանին գնել իրան համար կապիկին, բայց պալատի մէջ ոչ ոք չը գտնվեցաւ, որ կարողանար խօսել երեխայի հետ։ Ծառայողներից մէկը յայտնեց, որ նա ճանաչում է մէկ զինուորին, որ քիչ խօսում է ֆրանսերէն և հարեան զինուորանից իսկոյն բերեց Մեհմէդ Ռուշտիին, որը և թարգմանի պաշտօնը կատարեց։ Որպէս պարգև սուլթանը նրան օֆիցերի պաշտօն տուեց և այլ ևս չէր հեռացնում իրանից։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԳԱՇՏԷՅՆ, 23 յուլիսի։ Այսօր տեղի ունեցաւ Աւստրիայի և Գերմանիայի կայսրների տեսակցութիւնը։ Երկու կայսրները գրկվեցան, համբուրվեցան և խօսակցեցան միմեանց մէջ երեք քառորդ ժամ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 37 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 222 ր. 25 կ., երկրորդ 224 ր. 25 կ., արևելեան առաջին 91 ր. 87 կ., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 76 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25,65 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա 270 ֆրանկ 50 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

---

144 Արծրունու գալլէրէա 144 ամենաէժան պահեստ մէբլի և հայելիների.

---

ВЪ РЕДАКЦИИ ГАЗЕТЫ „МШАКЪ“ продаются слѣдующія нѣмецкія брошюры:

Die Oekonomische Lage der Armenier in der Türkei. von Dr. GRIGOR ARZRUNI. Ubersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.

Die Hungersnoth in Türkisch-Armenien von Dr. GRIGOR ARZRUNI. Ubersetzt von A. Amirchanjanz. Preis 20 kop.

---

**ԵՐԵՒԱՆԻ** նահանգից մի ոմն **ԵՐԻՏԱՍԱՐԴ** կամենում է Թիֆլիսի **ԽԱՆՈՒԹՆԵՐԻ** մէջ ծառայութիւն անել, կամ գործակատարի տեղ ընդունել: Ում որ հարկաւոր է, կարող է դիմել Զրկինենց եկեղեցու հայաթը: Երիտասարդը ունի անցագիր և վկայականներ: Սպասում է մինչև ներկայ ամսիս 25:

4—5

---

**ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբաներ, կոնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բոկալներ, Թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻԶՆԵՐ, Թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ալբոմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, Թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑՆ, խեբես, կոնեակ և այլն: ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մանգնեզիա, խմոր ԾԱՐԱԻԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական Թուղթ վառերկլօզեւտի համար, պարսկական փօշի:

35—100

---

**ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ** պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի փունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ**:

20—100

---

Утеряно 18-го іюля, проходя по Кочубеевской улицѣ, по Александровскомъ саду и по Головинскому Проспекту утвержденное подлинное ДУХОВНОЕ ЗАВѢЩАНІЕ, принадлежащее вдовѣ подполковника Ольгѣ Ивановнѣ Шпейеръ. Просятъ доставить таковое въ Куки на Кочубеевскую улицу, домъ Эссадзе, за приличное вознагражденіе.

3—3

---

Կորցրած է 18-ին յուլիսի անցնելով Կօչուբէեվսկայա փողոցով, Ալէքսանդրեան այգիով և Գօլօվինսկի պրոսպէկտով վաւերացրած իսկական ԿՏԱԿ, որ պատկանում է փոխ-գնդապետի այրի Օլգա Իվանօվնա Շպէյերին: Խնդրում են գտնողին հասցնել այդ կտակը Կուկիա, Կօչուբէեվսկայա փողոց, տուն Էսսաձէ, վայելուչ վարձատրութեամբ:

3—3

---

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ** անունով **ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ** դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրավաճառանոցներում:

Գինն է 40 կոպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը ԿԱՆԽԻԿ վճարելով և ճանապարհածախսը իր վրա առնելով՝

Թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ.— На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.“

---

**Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ**

Տեղափոխվեցաւ Գանօվսկայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՅԻՑԻ փողոցը № 11. Փոստատան ետևի քուչան: Ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի բա:

---

**„Խ Ե Ն Թ Ը“**

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „Կենտրոնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօղարջեանցի, Հովսեփեանցի ծխախոտի մագազիններում:

Գինն է **1** րուբլ **20** կոպ.

---

ԱՅՍ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ՍԿԶԲԻՑ

**ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ՝**

Որ առաջ գտնվում էր Արծրունու գալլէրէում, անցաւ Միրիմանեանի խանութները, Գօլօվինսկի Պրօսպէկտի վրա, Սուգէրնի Պալատի տակը № № 3, 4 (երբեմն Ջանջուղազեանների խանութը):—Այս 1881 թուականից գրախանութին կից բացվում են՝

Ա. Միտաւանձին բաժին ուսումնարական, գրենական, գրագրական պիտոյքների, ուր վաճառվում են՝ թղթեր թանաքներ, մատիտներ, տետրակներ, քարետախտակներ, գրատախտակներ, փօստի ծրարներ, հայերէն և ֆրանսերէն մոնոգրամով, կարկիններ, նկարչութեան վերաբերեալ պիտոյքներ և այլն և այլն...

Բ. Թիֆլիսում արդէն յայտնի „Մանկական դաստիարակութիւն“ (Дѣтское Воспитаніе) անունով պ. Աքիմեանի ֆիրման ևս անցաւ Կենտրօնական Գրավաճառանոցի ձեռքը, ուր վաճառվում են ամենատեսակ մանկավարժական խաղալիքները ամենայն հասակի մանկանց համար:

Ընդունվում են պատուէրներ նաև արտաքին քաղաքների ուսումնարանական վարչութիւններից ու մասնաւոր անձիքներից: Գները համեմատաբար չափաւոր են: Դրամաւոր պատուէրները կատարվում են անյապաղ:

Արտաքին քաղաքների օրիորդական ուսումնարանների վարչութիւնների գործը թեթևացնելու համար Կենտրօնական Գրավաճառանոցը յանձնառու կը լինի կատարել և այնպիսի պատուէրներ, որոնք իրան գործունէութեան շրջանից դուրս են, այն՝ Ձեռագործին վերաբերեալ ամենատեսակ պիտոյքներ գնել և ուղարկել, բայց միայն ուսումնարանների համար, որոնք իրանից են գրքեր և այլ ուսումնարանական իրեր գնում: Անփող պատուէրներն անկատար են մնում:

Կենտրօնական Գրավաճառանոցում ի միջի այլոց վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները՝

| | | |
|---|---|---|
| Րաֆֆիի. Խենթը | . . . . | 1 ր. 20 կ. |
| — Դաւիթ բէկ | . . . . | 1 ր. 50 կ. |
| Յովհաննիսեան. Հայը և Հայաստանը օտարների աչքում | . | „ ր. 30 կ. |
| Շահազիզեան. Հրապարակախօս ձայն. | . . | 2 ր. — կ. |
| — Նոյն փառակազմ | . . | 3 ր. — կ. |
| Այվազեան Գ. Արք. Պատմութիւն խալիպ. ուսումնարանի. | | 2 ր. 40 կ. |
| Աթանասեան. Երևանի նահանգի բուսականութիւնը | . | „ ր. 50 կ. |
| Բուսաբանութիւն համառօտ | . . | „ ր. 30 կ. |

Անփող պահանջներն անկատար են մնում:

---

**ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ** (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

43—150

---

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** անունով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

---

**ԵՂԲԱՐՔ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ**

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ

**Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ**

Գրասենեակը Կուզնէցկի կամրջի վրա, Կ. Ս. Պօպօվի տանը:

Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր ֆիրմայի **ԹԷՅԻ** առևտրի համար բաց արինք նորերումս նոր խանութներ և հետևեալ քաղաքներում՝

**ԽԱՐԿՈՎՈՒՄ**—Պետրովսկի փողոցի վրա, սեփհական տան:

**ԹԻՖԼԻԶՈՒՄ**—Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Միրիմանեանի տան:

**ՍԵՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ**—Բօլշոյ-Մօրսկօյ փողոցի վրա, Կօգէն վաճառականի տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները **Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ**, **ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ** և **ԿԻԷՎՈՒՄ**—թէյն որ առած է ֆունտերի, կէս ֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից, որ գտնվում է Մօսկվայում, Կրասնօսէլսկի փողոցի վրա, սեփհական տան:

1—30

---




**ՎԱՐՇԱՎԱ:** Իր յատկութիւններով մարմնի մասերի և մնացանը ոսկի մասնրի քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,




**ԳԱԼՄԱՆԻՆ**

անունով ծախվում է Եւրօպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներ և դրօգիստների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող ֆարմացիի մագիստրոս **Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ** դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլեկտօրալնի փողոց № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խարդախութիւններից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեկնութիւնը և փարիզի աշխարահանդէսի մեդալները:

**Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** 12—20 (1)

Дозволено цензурою, Тифлисъ. 24 Іюля 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.